

տարին ամենայն տեղից, ուր մի հայ եկեղեցի կայ, բարեպաշտական գործերի և ազգային եկեղեցական կեանքի ամէն մի երևոյթ կը զեկուցանուի մեզ, որ հազորդներ ի սփիւռս աշխարհի տարածուած հայութեան.— Հայոց եկեղեցու միւս մասերի կեանքի մասին համար կը տանք յաջորդ ամսատետրում:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅՍՏԱՆԵԱՅՑ.

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ .

Եզգիս Ահհափառ Հայրապետը յայտնում է իւր բարձր գոհունակութիւնը և հայրապետական օրհնութիւնը այն ամէն հաստատութեանց և անձանց՝ եկեղեցականաց և աշխարհականաց, որոնք որդիական պարտք էին համարել շնորհաւորելու Նորին Ս. ()ծութեան՝ նոր տարուայ, Փրկչի ծննդեան և Նորին Սրբութեան Ընուանակոչութեան տօներին:

— Նոր տարուան և Ջրօրհնեաց տօներին Նորին Ահհափառութիւնն ընդունեց Ս. Եջմիածնի միաբանութեան, Գ. Ճեմարանի ուսուցիչներին և աշակերտներին, Աղադաշտի դպրոցների աշակերտներին և հասարակութեան. ամէնքն ևս արժանացան հայրապետական օրհնութեան և խրատներին:

— Ս. Եջմիածնի վանուց տարեկան նախահաշիւը կազմուեցաւ և յանձնուեց Սինօզին ի գործատրութիւն. տեղի սղութեան պատճառաւ միւս համարին ենք թողնում նախահաշիւից քաղուածներ տպագրելը:

— Հայրապետական սրբատառ կոնդակով վանական կառավարութեան նոր անդամներ հաստատուեցան Բարձրապատիւ Աշոտ վարդապետ նախագահ, Թադէոս Խաչիկ վարդապետներ և շնորհունակ Ռափայէլ սարկաւազ անդամ:

— Տպարանական Աարչութեան նախագահ և տեսուչ Գեր. Երիստակէս եպիսկոպոս երկոտասան ամեայ արդիւնաւոր ծառայութիւնից յետոյ հրաժարական մատոյց Նորին Ահհափառութեան, Հայրապետական սրբատառ կոնդակով տպարանի տեսուչ և Աարչութեան նախագահ կարգուեցաւ Բարձրապատիւ Նահապետ վարդապետը իսկ անդամներ

Բարձրապատիւ Եղիա, Բենիկ վարդապետներն և նորրնձայ շնորհունակ Աուկաս սարկաւազը, Տպարանական Աարչութեան խորհրդատու անդամներ նշանակուեցան նաև խմբագրութեանս անդամներից Բարձրապատիւ Կարապետ վարդապետն և Պ. Ս. Գարամանցը:

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԽՐՈՒԹԻՒՆԸ.

Յունուարի 20-ին, սրբոյն Յովհաննու Մկրտչի յիշատակի օրը Հայաստանեայց եկեղեցին ամենուրեք տօնեց իւր Հայրապետի, ամենքի պաշտելի Հայրիկի անուանակոչութեան տօնը:

Նախընթաց երեկոյեան ամբողջ միաբանութիւնն ու ձեմարանի աշակերտները թափորով եկեղեցի բերին Ահհափառ Հայրապետին, Անուանակոչութեան օրը ս. պատարագից յետոյ կատարուեցաւ սրտառուչ կերպիւ հայրապետական մաղթանքն ու Հայրիկի աջն համբուրեցին միաբանութիւնն և ձեմարանի վարժապետներն ու աշակերտները եկեղեցում բացի հասարակութեան մի քանի ներկայացուցիչներից, որոնք Ահհարանում ընդունելութեան արժանացան:

Հանդիսաւոր ճաշին հրաւիրուած էին բացի ձեմարանի ուսուցչական խմբից և Երևանի հասարակութեան ներկայացուցիչներն ու թեմական զբօրոցի տեսուչը, Նորին Ահհափառութիւնը սեղանակից եղաւ միաբանութեան, ճաշկերոյթն անցաւ լուռութեամբ մինչև Գեր. Մեսրոպ արքեպիսկոպոսը բաժակ բարձրացնելով Նորին Ահհափառութեան կենացն առաջարկեց հետեւեալ խօսքերով.

« Անկնդիր լերուք առաջնորդաց ձերոց և հպատակ կացէք նոցա, զի նոքա տքնին վասն հոգւոց ձերոց, որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր: » * ասելով թէ իւր խօսքը հնազանդութեան մասին չեն, որովհետև Մայր Աթոռի միաբանները ամէն կերպ հնազանդ են, կարգապահ ու պարտաճանաչ այլ այն տքնութեան մասին է իւր խօսքը, որ Ահհափառ Հայրապետը այս քանի տարի կրում է ինչպէս միաբանութեան նոյնպէս իւր հօտի համար, մանաւանդ հալածեալ Ցածկահայոց համար, որոնք տառապանքների անսարանները ամէն օր նորա առաջ կենդանի կերպով պատկերացնում են. ուրեմն բարեմաղթները որ Աստուած երկար կեննք, կարողութիւն տայ Նորին Ահհափառութեան:

Քիչ յետոյ Նորին Ահհափառութիւնը խօսեց.

* Թողթ Երբայ. ԺԳ. — 47:

Ամենեցուն ժամանակ է և ժամ ամենայն իրաց ի ներքոյ երկնից, կըսէ Սողոմոն (Թողովող: Գ. 1) ժամանակ լալոյ և ժամանակ ծիծաղելոյ, ժամանակ ուրախութեան և ժամանակ տրտմութեան և ինչպսօր շրջան կանուս: մերթ ուրախութիւն կըրէ, մերթ տրտմութիւն:

Այստեղ նստած հանդէս կկատարէք, բայց ես մտքով հեռու կպտտեմ կերթամ Վան, Վարազ, Մոկս, Շաղախ, Մուշ և ինչ ամէն կողմեր, ուր ոտքով քալած եմ և ի՞նչ կտեսնեմ: ա՛խ, ի՞նչ է այս փիճակ, Ենոնք, որ մեռան, պրծան, ազատուցան այս ժամանակէս. բայց կմտածեմ անոնք որ կան՝ ողջ պիտի մնան. ինչպէս կպրեն մերկ ու քաղցած այս սառնամանիք միջոցին:

Լրագիրներ կարդալով կմխիթարուիմ երբ կիմանամ որ այդ տառապելներուն մասին հոգացողներ կան: Պօլիս եկեղեցի մը կայ, որ Վազազ ամիրան շիներ է, երկարութիւն երկու այս սեղանատան չափ կլինի, լայնութիւն ալ անոր համեմատ: Այժմս արհեստանոց դարձեր է 2—3 հարիւր աղջկունք, կանայք օրն ի բուն կրանեն ամէն տեսակ հանդերձ, ոտքից մինչև գլուխ, մինչև անգամ կօշիկներ կպատրաստեն փոքր երեխաներու համար. ծրար կշինեն բողբոջկան միսիոնարաց կեղրոնափայրեր կուղարկեն: Այնտեղ կժողովուի այդ ամէնը և կուղարկուի գաւառների կարօտեալներուն:

Բայց հացն ինչպէս կլինի. բոլոր միջոցներ սպառեցան, այստեղ ալ նուազել է, Ի՞նչ պիտի ընել, Պարտքեր կան որ ընդհանուրի վրայ կծանրանան: Ես որ Հայոց Հայրապետ եմ ի հարկ է իմ պարտքս է աւելի մտածել, Երբ կխորհեմ՝ յուսահատութեան անգունզին կհասնեմ, բայց կըկին կմխիթարուիմ ու հաւատով կզօրանամ: Երեկ Յոնան մարգարէին յիշատակն լրացաւ, անոր գիրքը կեկղեցւոյ մէջ կարդացուեցաւ: Նինուէի գիմաց բլուր մ՛եղած է. Յոնան բարձրացած կգիտէր, թէ ինչպէս իւր գուշակութիւն պիտի կատարուի, Նինուէ կործանուի:

Տաք երկիր մ'է, կերևի Երուսաղէմէն ալ տաք է, արևէն պաշտպանուելու համար հովանոց մը չինել էր, բայց երևի բաւական չեղաւ իրեն: Աստուած զդմնի մը բուսոյց, Յոնան ուրախացաւ անոր տակ, և կզովանար. բայց միւս առաւօտը Աստուած հրաման ըրաւ, «Եհնատ զդդմնին և ցամաքեցաւ» ըսած է: Յոնան կնեղուէր տապախառն խորշակէն, մինչ այն աստիճան, որ կըսէր. «Լաւ էր ինձ մեռանել քան զայս կեանս իմ»: «Յոյժ տրտմեալ իցես ի վերայ զդմնւոյն» կհարցնէ Աստուած: Այո՛, յոյժ տրտմած՝ մեռնել աւելի լաւ կհամարէր:

Ա՛խ, Հայաստանի զգմենին ի՞նչ ընենք. անոնք բարձրացեր էին, ոտներ էին արձակեր, հարաւային խորշակ հասաւ զարկեց:

Ես ալ Յոնանի պէս խորշակահար կըսեմ. «Լաւ էր ինձ մեռանել, քան զայս կեանս»: յոյժ տրտմութենէս կյուսահատուեմ, բայց և ս. Գիրք կարդալով կմխիթարուիմ հաւատս կզօրանայ:

Հայաստանի զգմենիներ չօրցան, բայց նոյն Աստուած կարող է նորերը բուսցնել և զօրեղացնել: Աղաչենք միաբանութեամբ, որ ս. Յովհաննէս Մըկրտիչ և Աստուածածին բարեխօս լինին Հայոց աշխարհի համար:

Հնա՛ միտս ընկաւ ճեճուած հաւին առակն ալ, որ յարմար կզայ ժողովուրդին. երբ օտար հաւ մը կը բերեն ու տան հաւերուն մէջ կը ձգեն, հին հաւեր այնքան կտոցով կզարկեն խեղճ հաւի գլուխ, որ արիւնաթաթախ կլինի, Հայն ալ ճեճուած հաւ եղաւ: Այն կողմն, Տաճկաստան, արիւնով ներկեցին հայու գլուխ, այս կողմն Մեծին Ռուսիոյ հովանու տակ, օրհնեալ ըլլայ ողորմած տէրութիւն, հայը ապահով կպարի:

Բայց լրագրաց մէջ կը գրեն թէ Տաճկաստանի հայ ապստամբեր է. իսկ այստեղ որպէս թէ հայեր կուզեն Կովկասու տէր դառնալ, կը կարգամ այս ամէն, կվշտանայ սիրտս: Հայն ապստամբութիւն, քաւ լիցի, 2է, այդ չէ մտածեր հայը. հայը միայն ապահովութիւն կըխնդրէ իւր ճակտին քրտիկքով, իւր արդար վատտակով պարել կը ցանկայ, Կը կարգամ այս ամէն և կը վշտանամ: Ալ չեմ կրնար աւելի խօսել:

Աղօթեցէք, որ Աստուած տայ այս անձկութեան մէջ չը մեռնիմ ալ մխիթարուած իջնիմ գերեզման. աղօթեցէք որ ծրագիրներս իրագործուին, Էջմիածնայ հռչակաւոր Մայր Աթոռ շինուի, իւր կոչման բարձրութեան հասնի, աղօթեցէք, որ Նըպատակներս կատարուին, թող Յովհաննու Մկրտչին և ս. Աստուածածնայ հետ ս. Լուսաւորիչն ալ բարեխօս լինի:



ՌՈՒՍԱՍԱՆԻ ԹԵՄԵՐ:

ՎՐԱՍԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ԹԵՄ:

Հաղբատի վանահայր հ. Յակոբբ փ. Նորատունկեանի վրայ աւազակները գիշերով յարձակուելով սպանել են և կողոպտել, առայժմ այդ գործը քննութեան տակ է և ինչպէս երևում է ոստիկանութեան պիտի յաջողուի բռնել մարդասպաններին: Այս սպանութեան պատճառը յափըշտակութիւնն է եղել, որովհետև Յակոբբ վարդապետը հարստի հռչակ ունէր:

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Արցախի (Ղարաբաղի) Թեմի վանքերի:

Սոփյառի 1892 թուականի վարչական բաժանման համաձայն Ղարաբաղի թեմը բաղկանում է Գանձակի (եկեղեցուօջի) նահանգի՝ Զարբայելի, Զաւանշիրի, Շուշիի, մասամբ Զանգազուրի և մասամբ էլ Գանձակի գաւառներից: Թեմիս վանքերը գտնուում են Զուանշիրի, Շուշիի և Զարբայելի գաւառներում որոնք բաժանուում են այսպէս. —

1. Թագէի—Սօթայ որ և Զարէքտարի
2. Գանձասարի սուր ԅովհաննու Մկրտչի
3. Մեծարանց սուրբ Յակոբայ
4. Սուրբ Եղիշայ Առաքելոյ և
5. Երից մանկանց վանքերը Զաւանշիրում:
6. Պոսիկ սուրբ Գէորգայ
7. Ամարասի սուրբ Գրիգորիսի
8. Քթիշայ " " և
9. Սուրբ Ղևոնդեանց վանքերը Շուշիում:
- և 10. Սպիտակ խաչի վանքը Զարբայելում:

ՋԱՆԱՆՇԻՐԻ ՎԱՆՔԵՐԸ.

1 Թագէի—Սօթայ որ և Զարէքտարի վանքը գտնուում է Ղարաբաղի ամենամեծ գետի՝ Թարթառի ափին: մի վերատաշափ հեռուօրութեամբ, Այս վանքը յայտնի է իբրև հանգստարան և անձրիի որ և վերին Խաչենի հայկազուն իշխանապետների, ներկայումս կանգուն կաթուղիկէն հիմնարկուած է հայազգի Քուրդ իշխանի դուստր և անձրիի Վաստանդ թագաւորացնի ամուսին Արզու խաթուն տիկնոջ ձեռքով Հայոց ՈՂԻ (663—1214) թուականին, իւր ամուսնի և որդոց յիշատակին:

Վանքիս ներկայ գրութիւնը խիստ աննախանձելի է՝ չորս կողմը աւեր և ամայացած, կաթուղիկէի կուտը ձաքձրոտած, շրջապատուած կիսաւեր գաւթով և ժամատնով, քայքայուած պարսպով, քարաշէն կամարակապ ընկարաններով ու շինութիւններով:

Վանքը իւր շրջակայ շինութիւններով նմանուում է մարդաշատ քաղաքի մի հարուստ թաղի, որտեղ միայն մարդկանց ներկայութիւնն է շունչ և կենդանութիւն տալիս:

Թագէի ուխտը, իբրև առաջնորդարան և բազմամարդ վանք, զանազան ժամանակներում ստացել է թէ այցելու ուխտաւորներից և թէ իւր հոգեւորական Տոբեոս և մարմնաւոր իշխանաւորներից այլ և այլ ընծայարեութիւններ և նուէր: Է որ անշարժ կալուածներով և է որ եկեղեցական զարդու զարդարանքներով:

Սուրբ ուխտիս շարժական բոլոր անօթ-զգեստները ժամանակի աւերիչ ձեռքերից ցիր ու ցան է եղած, փշացած և անյայտութեան մատուած, Միայն վանքիս նուիրած սուրբ Աւետարաններից մի

1. իսկ Ղարաբաղի Թեմի նուսնի յաջորդութիւնը յուսնի եւ Արաչի գաւառներից:

քանիսր այժմ գտնոււմ են զանազան վանքերում և եկեղեցիներում: Բնչպէս որինակի վերին Խաչենի իշխող Գօփեան Գրիգոր իշխանի նուիրած երկաթազիր աւետարանը որը նուիրած է վանքիս իւր ամուսին, Միւնեսց Օրբելեան Տարսայիձ իշխանի դստեր Ասօայ տիկնոջ յիշատակին 2ԳԱ (761—1361) թուականին այժմ գտնուում է Գանձակի սուրբ թարգմանչաց վանքում: նոյն Գօփեան Վահրամ իշխանի որդի Սարգիս իշխանից նուիրուած հինաւուրց 2ԿԻ (763—1215) թուականի զանգակը գտնուում է Գեղարքունիքի (Գեօգչայի) Թուսկիլու Հայրենակ գիւղում: Նմանապէս Հուշի քաղաքի դաղանչեցուց սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյ աւետարանը և Զարաբերգի Մեծ Հէն գիւղի աւետարանը ժամանակով վանքիս սեփականութիւնն է եղել: Բացի վանքիս շարժական սեփականութիւնից, ներկայումս վանքը ունի անշարժ կալուածք աւելի քան 98:438 ղեսեատին տարածութեամբ: որից յիսուն հազարը անվէճ վանքի սեփականութիւնն է կալմուում: Իսկ մնացեալ 48 հազարը փիճկի է, Վանքիս կալուածներում ապրում են աւելի քան քսան երկու թիւրք շշլ աղէն և որոնք այդ անահաման տարածութիւնից օգտուելու համար վճարում են ընդամենը 396 բուրլի:

Ներկայումս խոճալի գրութեան մէջ են գրտնուում վանքիս կալուածները: Միայն այսքանս կանեմ որ ամբողջ Գեղարքունեաց մեծատարած փիճակի աղգարանկութիւնը իւր բոլոր շինութեանց համար հարկաւոր փայտը տանում է Սօթայ կալուածների անտառներից, մեծա մասամբ գողունի և մասամբ էլ չորացած և անկեայ ծառերի անուամբ: Այս մասին հաստատիանալու համար բաւական է միայն Պուժրասար լեռնաշղթայի անցքերում մի երկք օր կանցնել և տեսնել թէ ինչպէս կարաւան կարաւանի ետևից շինութեանց համար գերաններ և այլ տեսակ փայտեր են անցկացնում:

Բայց վանքի գիւղացիները այլ կերպ են վարուում անտառների հետ: իւրաքանչիւր «Ղըշլ աղի» ժողովուրդ իւր համար ազատ կտորած է աւնում անտառում: նոր նոր խմա հատն և բանալով և շինութեանց համար անհաշիւ ծառեր կտորելով: Գիւղացիները իւրաքանչիւր ձմեռ անհամար ծառեր են ձգակտոր անում, բոխրոխտոտած կոկոններով ընտանի անասուններին կերակրում և գարնանը կրակի ձարակ տալիս անտառին, որպէս զի մի քանի չափ հացահատիկ ցանեն:

Այժմ անցնենք վանքի գոյանի ամարանոցների և ձմերանոցների արօտատեղիներին. թէ ինչպէս են պահպանուում վանքապատկան արօտատեղիները, և միայն կը վկայեմ իմ աչքով տեսածների մասին: Ամենայն տարի արքունի և զանազան բեկեղի պատկանող թուրք գիւղացիներ անարդել մրտնում են վանքապատկան կալուածները և իրանց համար ազատ կերպով վրաններ ցցում վանքական արօտատեղիներում և իւրեանց ընտանի անասունները արածացնելով հանգրեձ ազգի ազգի նեղութիւններից են հացցնում և վանքական թուրք ազգաւանկութեան նրանց արտերը և արօտատեղիները փչացնում և այլ նեղութիւններ տալիս: Բնչպէս որինակ վերջին ժամանակներս Ղլիջու թուրքերը ինքնագուս մտել են վանքական կալուածները և վարուցանքս են սկսել վանքական Գամուրչիկամլութուրքերի կալուածներում, Եթէ այսպէս շարու-

նակուի շատ մօտիկ ապագայում վանքական կալուածները հիշատակեալ կօտարանան և վանքին մեծամեծ վնասներ կը հասնին Պէտք է միջոցներ ձեռք առնել այսպիսի յարձակումների դէմ որպէս զի վանքի կալուածները շտաբանան:

Սրանից շատ տարի առաջ Եռւշուայ կոնսիստորիան Խօթայ վանքի լայնածաւալ յիսու՛ն հաղար դեւիատին անվէճ կալուածը պայմանագրով յանձնել է վանքական Եյրու՛մցի թուրք ազգայնակութեանը տարեկան շուր հարիւր ուուրլի կապալադրամով, որի ժամանակամիջոցը վաղուց ի վեր է լրացել, բայց մինչև ցայսօր չեն կարողացել պայմանագիրը նորոգել կամ փոփոխել: Թուրքերը յիշեալ պայմանագրով ի հիման վրայ խնդրագրով զիման են հաշտարար միջնորդին, որպէս զի՝ Խօթայ վանքի կալուածներում Եյրու՛մցիների վրայ հողարժանութիւն կատարուի: Ինչպէս՝ հաւատարմութեամբ հաշտարար միջնորդը 1895 թուականին հողարժանութիւնը պիտի տեղի ունենար Եյրու՛մցիների համար: Այս թէ որպիսի վերահաս վտանգների հետ պիտի մրցել, անհրաժեշտ է ուշագրութիւն դարձնել, որպէս զի վանքն այսպիսի հանգամանքներում զրկակալներ չկրի: Այժմ վանքական 150 տուն թուրք ազգայնակութիւնը ցրուած է ապրում վանքի կալուածներում: ամէն մի ձորամիջում երկու երեք տուն մի մի դշուղ կազմելով ձգտում են հողարժանութեան ժամանակ հաղարարը դեւեատին կալուածները հողարժանին ստանալու: Առաջիկայ հողարժանութեան ժամանակ շատ մեծ և զգուշաւոր ուշագրութիւն պիտի դարձնել, որպէս զի վանքը բազմակողմանի իրաւունքներ վերապահի դէպի իւր հպատակ ազգայնակութիւնը: Աերջացնելով խօսքս Խօթայ վանքի մասին՝ այսքան կարող եմ ասել, որ վերոյիշեալ լայնածաւալ կալուածներից և անտառներից կարելի կը լինի հաղարարը ուուրլի եկամուտ ստանալ, եթէ միայն փոխուի այդ կալուածի կառավարութեան եղանակը, բաւական է միայն Խու՛մբասար լեւոնաշղթայի անցքերից մինում գրասենեակ ունենալ և անցքերի վրայ հաւատարմ պահպաններ նշանակել, որպէս զի առանց գրասենեակից տոմսակ զիցնելու: Գեղարքունեաց ազգայնակութիւնը չկարողանայ ինքնազուտ և գողունի կերպով փայտեր անցկացնել, նոյնը և կարելի է անել այն արքունի և բէկական թուրքերի վերաբերութեամբ, որոնք ինքնազուտ մտնում են վանքան կալուածները և ձիարար օգտուում: անտառի պահանջելով բոլորից օրինական տոմսակներ և ապա թոյլատրել օգտուելու:

Խօթայ վանքի կառավարութեան զժուարութիւններից մինն էլ այն է, որ այնքան կալուածներում ոչ մի հայարնակ գիւղ չը կայ:

2. Գանձասարի սուլը Յո՛վհաննու Մկրտչի վանքը գտնուում է Խաչնայ գետի վրայ, երկու վերստ հեռավորութեամբ դէպ հիւսիս: Այս վանքը ներքին Խաչնի իշխանազունների հանգստեան տեղն է կանգնած: Իշխաններից Հասան Զալալ Գովա ահանաւոր մեծ ժարդը կառուցեց այս վանքը 122Ը (688—1239) թուականին իւրեանց տոհմային հանգստարանում: Թարգէլ Խօթայ վանքից յետոյ ամբողջ Կարաբաղի վանքերի մէջ առաջին տեղը կարող է բռնել Գանձասարը թէ իւր ճարտարապետական կերտուածքով և թէ վանական կալուածական հարստութեամբ:

Ներկայումս վանքը շատ անմխիթար դրութեան մէջ է գտնուում: Կաթուղիկէն ճարճքոտած, տանիքը խախուտ և բուսականութեամբ ծածկուած, եցերը և կացարանները քայքայուած, խանգարուած, այնպէս որ հազիւ կարելի լինի Ազուանից վերջին կաթուղիկոտարանում մի սենեակ գտնել մի քանի օր գիշերելու: Երջապատի պարսպի փլած անցքերն անդամ չեն կարկատուած: Վանքի մէջ բացի վանահօրից ոչ մի միայն չկայ: Այս վանքում անհրաժեշտ էր մի ընծայարան բանալ, որպէս զի շրջապայ բազմաթիւ հայարնակ ժողովրդականաց համար եկեղեցականներ պատրաստուին: Ըննայելով որ վանքն այժմ ամայի է և աւերակ, բայց և այնպէս Գանձասարն ունի բաւական անվէճ կալուած թէ իւր շրջակայքում թէ Եռւշու և թէ Զուանչիի գաւառների զանազան կողմերում: Եռւշու գաւառում ունի Քարագլուխ գիւղի մօտ 676 դեւեատին ամենազովական վարելահող և անտառ, այգիներ և այգետեղիներ: Այս կալուածքը, որ կոչուում է Աշմանա, Գանձասարի ամենաարդիւնաշատ կալուածքը կարելի է համարել, նամանաւանդ, որ այս կալուածքի հարեւուրութեամբ տարող հայարնակ գիւղերը փայտի կողմից մեծ կարօտութեան մէջ են և համարեա այս կալուածքի անտառներով չեն կառավարուում: Այս կալուածքը Գանձասարից 20—25 վերստ հեռավորութիւն ունի և համարեա կից է Պակի սուլը Գէորգայ վանքի կալուածներին: Բացի սրանից Գանձասարն ունի վանքից 15—20 վերստ հեռավորութեամբ հայարնակ Կիւան (Բալլուզայեաց) գիւղը և գիւղի կալուածներին կից Գիւլլալ (կամ Գիւլլութալայ) և Լընջատաի վարելահողերը: Այս բոլորը միասին առած վանքն ունի մօտաւորապէս 3,000 դեւեատին վարելահող և անտառ: Իսկ Թարթաի Հաթիբը գիւղում Գանձասարից 25—30 վերստ հեռու գտնուում է Հաթիբըի Ծաղկոց անտառ կալուածքը, զուտ վարելահողի 300 դեւեատին տարածութեամբ: Իսկ վանքից 10 վերստ հեռավորութեամբ գտնուում է վանական Կձողուտ (Եայլի) հայարնակ գիւղը, որ նամանապէս ունի երեք հազար դեւեատին վարելահող և անտառ: Բացի այս բոլորից Գանձասարի շրջակայքում գտնուում է վանական ամենամեծ կալուածքը, Վանք կոչուած կոչուած գիւղը, Հիւնահող և Գոմակալ գիւղարածառումներով, որոնց տարածութիւնն է մօտ վեց հազար դեւեատին: Այս կալուածքումն է գտնուում և Գանձասարի անսպառ եկամտի աղբիւր երկանաքարի հանքը, որ միակն է ամբողջ Կարաբաղում: այս հանքը գտնուում է վանքից երկու վերստ հեռու: Ընդամենայն Գանձասարի կալուածքները հասնում է 12,600 դեւեատին: որից հոգեւոր իշխանութիւնը եկամուտ է ստանում 795 ա. 43 կ. նոյնքան էլ ձախուում է վանքի և կալուածների պահպանութեան վրայ:

Անցեալ տարի Գանձասարի վանական գիւղացիների մէջ կատարուեց հաշտարար միջնորդի ձեռքով հողարժանութիւն, որով որոշուեց վանքի և ժողովրդականաց յարաբերութիւնները, մեծ մասամբ յօգուտ վանքի: Այնպէս որ այսուհետե կա լելի կը լինի վանքի եկամուտները հասցնել երեք հազար ուուրլուց աւելի, որով կարելի կը լինի և վանքը պայծառացնել և կալուածները յափշտակութիւններից ազատ պահպանել:

3. Մեծարանց սրբոյն Յակոբայ վանք

քը գտնուում է Խաչենայ գետի Հարաւային կողմը, գետից երեք վերստ հեռաւորութեամբ:

Այս վանքը վերստին նորոգուած է Հասան Ջալալ Գոմիայի մօր Խորիշահ տիկնոջ ձեռքով ՈՎԱ (161—1212) թուականին իւր հանգուցեայ ամուսին Վահտանգ իշխանի յիշատակին: Վանքը նման է մի խարխուլ, խանգարուած, ճարճքած հասարակ մի զոյգ եկեղեցեաց կամ մատուռների, շինած բոլորովին հասարակ քարերից, Այս վանքումն էին նստում Աղուանից կամ թուրքերից շատերը, որոնց գամբարանները շարուած կան վանքի գաւթում: Սկզբում այստեղ էր պահուում Արցախի աւագ սուրբ Նշանը որին անպայտանայաց յետոյ փոխարինում է սրբոյն Յակոբայ աջը, որ ներկայումս մեծ յարգ ունի ամբողջ Արարարչում: Վանքն ունի ընդամենայն 452 զեեսատին կալուածք, անտառ, վարելահող և մի ջրաղաց Քոլատակի գետի վրայ, որ Խաչենայ գետի մեծ գետն է համարուում: Տարեկան եկամուտ ունի 158 ր. 58 կ. նոյնքան էլ ծախսուում է վանքի պահպանութեան համար:

4. Սուրբ Եղիշայ առաքելոյ վանքը գտնուում է Թարթառ գետի հիւսիսային կողմում Թարթառի մէջ թափուող Եղիշ առաքել անուամբ ջրի վրայ, Վերանորոգուած է Ուր (633—1284) թուականին ոմն Սերաբ Սարկաւազի ձեռամբ: Վաչազանեան տոհմի չիրմատունը և Արարաղի ամենահին վանքերից մինն է համարուում: Վանքը խարխուլ և աւերակ մատուռների մի կոյտի է նման: ունի ընդամենն 22 զեեսատին անտառ և վարելահող տարեկան եկամուտ 20 ր. 78 կ., որքան ստացուում է, նոյնքան էլ ծախսուում է վանքի պահպանութեան վրայ:

5. Սուրբ Երից մանկանց վանքը Թարթառ գետի աւագ վտակի Քորիկի վրայ է գտնուում: Թարթառից 10 վերստ հեռու, Շինուած է ՌՃՆ (1140—1691) թուականին Աղուանից հակաթոռ Սիմէոն կամ թուրքերի Աղուանից հակաթոռ կամ թուրքերի ունի, որ միայն մի քանի տեղից վնասուում է: շուրջը կան բազմաթիւ քարաշէն բնակարաններ միարանից և ուխտաւորաց համար: Վանքն ունի ընդամենն 25 զեեսատին վարելահող, անտառ և այգիք: եկամուտն է 86 ր. 35 կ. նոյնքան էլ ծախք: Այսպէս Ջաւանշիրու հինգ վանքերն ունին անվիճ 60,856 զեեսատին, իսկ վիճելի յիսուն հար:

II. ՇՈՒՇՈՒ ԳԱՆՎԱՆՈՒ ՎԱՆՔԵՐԸ:

6. Պա կի սուրբ Գէորգայ վանքը գտնուում է համանուն լեռնաշղթայի ամենարարձր գագաթան վրայ: Այս շղթան է բաժանում միմեանցից Արարաղի երկու պատմական գետերը, Խաչենն և Գարգարը: Վանքը շինուած է ՌՃՂԳ (1194—1745) թուականին ոմն Յովհաննէս վարդապետի ձեռամբ: Այժմ սա մի կիսուակ և ամայի շինութիւն է: Վանքի մօտ կան մի քանի կիսովչակ փուլ եկած խցեր: Ընդամենայն ունի կալուած մօտ 300 զեեսատին անտառ և վարելահող, Տարեկան եկամուտ է բերում 110 ր. 35 կ., նոյնքան էլ ծախսուում վանքի վրայ: (Այս վանքի կալուածներին կից է Գանձասարի Քարագլխի մօտ Աշմանա կոչուում կալուածքը 776 զեեսատին):

7. Ամարասի ս. Գրիգորիսի վանքը համարուում է Արարաղի ամենահին ուխտատեղին: գտնուում է Ամարաս գետի վրայ (Քեօշուղ) ըստ

պատմաց հիմնարկուած է 332 թուականին սուրբ Լուսաւորչից, Իսկ 530 թուականին նորոգուած է Վաչագան Աղուանից արքայի ձեռամբ և վերջին նորոգ շինութիւնը 1858 թուականին Աեհապետեան Գեորգ Արքեպիսկոպոսի նախաձեռնութեամբ: Միակ վանքն է Արարաղում որ շինուած է դաշտավայր տեղում: շրջապատուած քար ու կիր քառարուրդ պարսպով կամարակապ բնակարաններով և խուցերով ներկայումս վանքի կոտորը բաւական վնասուած է: կրածաճքը փչացած: միայն խցեցի մեծ մասը վերանորոգած և պայծառացրած են: Այս վանքն ունի մօտ 500 զեեսատին աղատ կալուածք, վարելահող, այգիներ և այգետեղ և մի ջրաղաց: Տարեկան եկամուտն է 400 ու. նոյնքան էլ ծախք ունի: Այս վանքի կալուածներից կարելի է աւելի շատ արդիւնք ստանալ:

8. Քթիշայ ս. Գրիգորիսի վանքը համանուն լեռան լանջի վրայ, Շինուած է Ամարասու Սարգիս և Վարդան եպիսկոպոսների ձեռքով ՈՎ. (690—124) թուականին: Ամարաս ամայանայուց յետոյ, Այս վանքն իսպառ քայքայման է ենթարկուել: ունի 65 զեեսատին անտառ և վարելահող: Այ մի արդիւնք չէ տալիս և վանահայր էլ չունի:

9. Ս. Ղեւոնդեանց անապատը շինուած է Քեօնդաւան գետի Շորաջուր վտակի վրայ 3 վերստ հեռաւորութեամբ: Վանքը մի հին գարոց ուի: Արձանագրութիւնները իսպառ եղծուած են: Շրջապատած է կիսաւեր քարաշէն պարսպով և խարխուլ կացարաններով: Աւելի ծոտուորապէս 50 զեեսատին անտառ և վարելահող, եկամուտն է 57 ր. 84 կ. նոյնքան էլ ծախք:

Շուշու գաւառի չորս վանքերն ունին կալուածք 1666 զեեսատին, սրա մէջն է և Գանձասարի Քարագլխի մօտ Աշմանա կալուածքը 776 զես:

III. ԱՆԻՐԱՅԵԼԻ ՎԱՆՔԵՐԸ:

10. Սպիտակ Խաչի վանքը գտնուում է Հաղրութ գետի վրայ (Ղոչուշայ), գետի Հարաւային կողմը մի վերստ հեռաւորութեամբ: Ժողովրդական աւանդութիւնը պատմում է իրր թէ Աղուանից առաջին կամ թուրքերի սրբոյն Գրիգորի նահատակութիւնից յետոյ, նորա հայրապետական գաւաղանը և լանջկան բերեղեայ խաչը պահուում էր Ամարասում: որտեղ ամփոփուած են նորա նըշխարները, Ամարաս ամայանայուց յետոյ յիշեալ սրբութիւնները պահուեցան Քթիշայ վանքում: իսկ վերջինիս անջքանալուց յետոյ Սպիտակ խաչի վանքում էր պահուում բերեղեայ սպիտակ խաչը, որ ինչպէս ասում են վերջին ժամանակներումս է անյայտացել: Այս վանքի շինութեան բուն թուականը յայտնի չէ: Արքեպատանի խաչքարերի արձանագրութիւններից երևում է, որ երեքտասաններորդ դարում պիտի լինի շինուած: բայց վերջին նորոգութիւնը եղած է ՌՃՁԳ (1184—1735) թուականին ձեռամբ Սուրբապի որդի Յովհաննէս եպիսկոպոսի: Վանքի ներկայ շինութիւնը բաւական մարդու և ամուր շինութիւն է: Աւելի չորս կոտոր վարելահող մօտ 25 զեեսատին, եկամուտն է 20 ուրբլի: Ջարայելի գաւառում ունիւք միայն մի վանք, որի կալուածն է 25 զեեսատին:

Այսպէս որեւմէն Վարարարի թեմում գտնուում է ընդամենը 10 վանք, որոնցից միայն երկուսն մէջ կան վանահայրեր, և մարատում և Գանձատարում: Խօթում նստում է մի քահանայ որ անունով միայն վանահայր է: Իսկ մնացեալ վանքերում ոչ

վանահայրեր, ոչ պահապաններ կան: Այս տարը վանքերի կալուածները հասնում են 112,540 զեսեաւորի, որից անվէճ է 62,540 զեսեաւորին իսկ վիճելի 50 հազար: Ընդամենը եկամուտ է եղել յընթացս 1892 ամի 2 060 ա. և ծախք 2 060 ա.:

Յ Ո Ւ Յ Ա Կ

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ՎԱՆՔԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ.

Թ. թ. Ը	Որքանութիւն կալուածոց, դեսեաւորով:	Ն կ ա մ ու տ 1892 թ.	Ժ ա խ ք 1892 թ.	Վանահայր			
Ա. Զրանշիրու զաւառում.							
1.	Թաղէի (Խօթայ) որ և Չարեքտարի վանք.	98,438	396	—	396	—	Անունով միայն.
2.	Գանձատարի ս. Յովհաննու Մկրտչի « »	12,600	795	43	795	43	ունի
3.	Մեծարանց ս. Յակոբայ « »	452	158	58	158	58	չունի
4.	Եղիշայ Առաքելոյ « »	25	20	78	20	78	չունի
5.	Երից մանկանց « »	25	86	35	86	35	չունի
Բ. Շուշու զաւառում.							
6.	Պակի ս. Գէորգայ « »	300	120	35	120	35	չունի
7.	Ամարասու ս. Գրիգորիսի « »	500	400	—	400	—	ունի
8.	Բթիշայ « »	65	—	—	—	—	չունի
9.	Ս. Վ. Առնդեանց անապատը.	50	57	84	57	84	չունի
Գ. Զարայէլու զաւառում.							
10.	Սպիտակ Խաչի վանքը.	25	25	—	20	—	չունի
Ընդամենայն Վիճելի		112,540	2060	—	2060	—	5 վանքում վաճառար. 7 վանք վանահայր չկայ:
Անվէճ սեպհականութիւն		62,540					

Խ. Վ.

2. Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք .

Հայրապետական գիւան հասած զեկուցումներից երեւում է, որ Սերփայի, Գիարբէրի, և Կիլիկիոյ սահմաններում ստակալի կոտորածներ են տեղի ունեցել անցեալ տարուան նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին: Մարաշի և Այնթափի կոտորածների մանրամասնութիւնները զարհուրելի են: Այս տեղեկութիւններից երեւում է, որ զեռ. և ս. Տաճկաստանը հեռու է խաղաղական վիճակի մէջ մանեւուց, մանա-

ւանդ որ Գերսիմի քրդերը յայտնի ապստամբութեան գրոշ են բարձրացրել և տէրութիւնն անգոր է նրանց ընկճելու:

Կարինից և առհասարակ բուն Հայաստանից հասած տեղեկութիւնները պատմում են այն սարսափելի աղքատութեան մասին որի տակ հաւասարապէս հեծում են թէ քրիստոնէայք և թէ մահմեդականները: Վաճառականութիւն և արհեստները դադարել են:

— Ամենապատիւ Տէր Մատթէոս պատրիարքը մի ազգու բողոքագիր է ներկայացրել Բ. Դրանը և մի առ մի թուելով հայազգին հասած գրկանքները, պահանջում է որ քաարարութիւն տրուի կողոպտուածներին, պատժուին մարդասպանները, առեանգիւները, ըննարարողները, սրբութիւններ պղծողները, որա հետ միասին պահանջուում է որ գաւառներից յետ կանչուին քաղաքական և ղինուորական այն պաշտօնեայք որոնք յայտնի մասնակցութիւն են ունեցել բրիտանեաների ջարդի մէջ:

Ազգիս վեհափառ Հայրապետը այս դեկուցումն ընդունելով միւս բոլոր տեղեկագրերի հետ ուղարկեց ուստաց կառավարութեան արտաքին պաշտօնեայ վսեմապատիւ Լոբանով-Սոստովսկի իշխանին: Վեհափառ Հայրապետը այդքան մեծամեծ թշուառութիւններին դարման հասուցանելու համար ինզրել է նաև ներքին գործոց պ. Նախարարի միջնորդութիւնը հանգանակութեան իրաւունք ստանալու համար:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՈՒՆԿԻՈՅ ՀԱՅՈՑ.

Քաղաք եւ գիւղօրայք.	Տունք.	Քաղաք եւ գիւղօրայք.	Տունք.
Ատանա եւ իր գիւղեր . .	3,600	Ծօզդատ իր գիւղերով . .	5,000
Տարսոն	80)	Մանձրըք իր գիւղերով . .	2,500
Մէրսին	15)	Մարաշ	3,000
Սելեւկիա	200	Այնթապ	2,500
Սիս	100	Քիլիս	500
Ղարսպազար	300	Հալէպ	100
Համըն իր գիւղերով . .	5,00	Անտիոք իր գիւղերով . .	200
Վահկա	20)	Պէլէն եւ իր գիւղեր . .	400
Ձէյթուն իր գիւղերով . .	4,09	Իսկէնտէրուն	80
Փոնուզ	800	Չօրքմարզպան իր գիւղերով	3,000
Կապան	800	Մամեստիա	200
Կոկիսոն իր գիւղերով . .	1,000	Հայլեռ իր գիւղերով . .	2,000
Եփեսոս (Եարքազ) . . .	200	Պէսնի	600
Լյւպիստան իր գիւղերով .	500	Ատինեաման իր գիւղերով .	800
Կիւրին	3,000	Մալաթիա	3,000
Դարէնուէ	1,000	Տիվրիկ	3,000
Աշոտի	800	Էվէրէք	600
Կաւ մօր	23,450	Կաւ մօր	29,980
		Ընդհանուր գումար	53,430
		Անձինք	× 5
			267,150

